ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 66
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը (Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Սևան համայնքի (Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը (Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-1 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի (Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-024-0291-0022, 05-047-0143-0049, 05-047-0143-0050 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար՝ 0.00476 հա, 0.00410 հա և 0.00348 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	05-024-0291-0022, 05-047-0143-0049, 05-047-0143-0050 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար՝ 0.00476 հա, 0.00410 հա և 0.00348 հա մակերեսներով էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ էներգետիկայի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Սևան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի (Գեղամավան և Ծաղկունք բնակավայրերի) հաստատված գոտևորման նախագծերում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «26» «փետրվարի» 2025 թ.